

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ

ԴՊՐՈՑԻ

ԴԱՍԵՐ

ԿՐՏՍԵՐ ԲԱԺԻՆ
Բ. ԴԱՍԱՐԱՆ

ՊԱՏՐԱՍԵՑ
ՆՈՒՊԱՐ ՍՐԿ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԵՐԿՈՒ ԽՕՍԲ

Հողեկան անհուն գոհունակութեամբ կը վերահրատարակենք Կիրակնօրեայ դպրոցներու բազմալատակ մշակ՝
Բարչ. Նուպար Սրկ. Պէրպէրեանի պատրաստած ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ԴԱՍԵՐՈՒ Կրտսեր Բաժնի երեք
վերջերը՝ պատրաստուած արդի մանկավարժական ըմբռնողութեամբ եւ հայ մանուկին մատչելի ու դիւրահա-
ղորդ կերպով:

Անկասկած որ, այս երեք դասագրքերուն վերահրատարակութիւնը օրհնաբեր պիտի ըլլայ Կիրակնօրեայ
Դպրոցներու աշակերտութեան համար, որովհետեւ տասնամեակէ մը ի վեր զգալի էր պահանջը նման հրատա-
րակութեանց:

Այս առթիւ եղբայրական պարտք կը զգանք մեր շնորհակալութեան անկեղծ զգացումները յայտնել Ամե-
րիկահայոց Արեւելեան Թեմի Առաջնորդ՝ Գեորգ Տ. Մեարոպ Ս. Արք. Աշճեանին, որուն բարեխօսութեամբ ազ-
նիւ բարերարուհին՝ տիկին ՄԱՓԻԿ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ, սիրայօժար ստանձնեց սոյն գրքին հրատարակութեան ծախ-
սերը:

Մեր պատուէրն ու թելադրանքն է Կիրակնօրեայի մեր դաստիարակ ուսուցիչներուն, որ յատուկ բժա-
խնդրութեամբ ու նախանձախնդիր ոգիով գործածեն այս դասագիրքերը հետեւելով վարը եղած մատնանշումնե-
րուն:

ՍԵՊՈՒՀ Ծ. ՎՐԴ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ

ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ

20 Յունուար 1936

Անթիլիաս

ԴԱՍԱԳՐՔԻՍ ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ ԵՂԱՆԱԿԸ

Այս դասագիրքը կը բաղկանայ երեսուն երեք դասերէ, Ձմեռնային Ուսման Տարեշրջանի ծրագրին
համաձայն պատրաստուած:

1.— Մանկապարտիզպանուհին՝ իւրաքանչիւր աշակերտի դասագրքին կնիկ կողմ մը պէտք է
անցնէ, որպէսզի մաքուր պահուի: Այս կողքին վրայ պէտք է փակցնէ պիտակ մը, անոր վրայ գրելով աշա-
կերտին անունն ու՝ մականունը եւ Ուսումնական Տարեշրջանի թուականը:

2.— Աշակերտներուն պատկանող դասագրքերը, Ուսումնական Տարեշրջանի ամբողջ ընթացքին
պէտք է պահուին դպրոցէն ներս՝ գոյֆապահին մօտ: Ամէն Կիրակի անոնք պէտք է տրամադրուին իրենց տե-
րերուն, առ ի գործածութիւն:

3.— Ուսուցիչը նախ քան դպրոց գալը, պարտի սերտել օրուայ դասը, խորագրին ներքեւ նշա-
նակուած հատուածը կարդալով ԱՍՏՈՒԱԾՄԱՇՈՒՆՁԷՆ:

4.— Դասաւանդութեան պահուն, իւրաքանչիւր աշակերտ իր ձեռքին մէջ պէտք է ունենայ իր
դասագիրքը: Ուսուցչին օգնութեամբ պէտք է բանայ օրուայ դասին տեղը, եւ շիտէ նկարը ու հետեւի ու-
սուցչին, որ նկարին վարի բաժինը գտնուող մի քանի տող դասը կարդալէ ետք, պէտք է հետաքրքրական
կերպով պատմէ դասը եւ կրկնել տայ. սպա գոց տրվեցնէ ստորեւ գրուած ԳՈՑ ՍՈՐՎԻԼ ԲԱԺՆԻ ՀԱՏԱԾՐ:

5.— Դասաւանդութիւնը պէտք է տեւէ 5-10 վայրկեան եւ ո՛չ աւելի: Ապա գունաւոր մատիտներ
պէտք է տրամադրուին աշակերտներուն եւ ուսուցչաց օգնութեամբ նկարները ներդաշնակ կերպով ներկել
տալու փորձեր կատարուին:



6.— Այս աշխատանքներուն վրայ լուրջ կերպով պէտք է հսկէ ՄԱՆԿԱՊԱՐՏԻՉՊԱՆՈՒՀԻՆ:

7.— Այս բոլորէն ետք իւրաքանչիւր աշակերտի դասագիրքը պէտք է յանձնուի դպրոցի գոյֆա-
պահին: ՏԱՐԵՎԵՐՁԻՆ աշակերտները կ'ըստանան իրենց դասագիրքերը եւ կը տանին տուն, ուր ծնողք
պէտք է խնամով պահեն գայն, իբր գեղեցիկ յիշատակ մը, իրենց գաւկին հաշույն:

Ա. Դ Ա Ս

ՅՈՎԱԷՓ ԵՒ ՄԱՐԻԱՄ ԲԵԹԼԵՅԷՄԻ ՄԷՋ

(Լուկ. Բ. 1—5)



Յովսէփ եւ Մարիամ աշխարհագրի ժամանակ Բեթլեհէմ գացին՝ իրենց անունները արձանագրել տալու: Սակայն պանդոկին մէջ պարապ սենեակ մը չկրցան գտնել բնակելու. համար եւ ստիպուեցան մտնել քարայր մը, որ կենդանիներու բնակարան էր:

ԳՈՅ ՍՈՐՎԻԼ

Յովսէփ ալ, Գալիլիոյ Նազարէթ քաղաքէն, ելաւ դէպի Հրէաստան՝ Դաւիթի քաղաքը, որ Բեթլեհէմ կրտսի: Լուկ. Բ. 4:

ՅԻՍՈՒՍԻ ԺՆՈՒՆԴԸ

(Ղուկ. Բ. 6—7)




Յիսուս Մանուկ ծնաւ Բեթլեհէմի քաղաքին մէջ: Մարիամ իր նորածինը խան-
ձարուրով փաթթեց եւ պառկեցուց կենդանիներու մտուրին մէջ: Հայր Յովսէփ եւ Մարիամ
Աստուածածին շատ ուրախացան Անոր ծննդեան համար:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Ու խանձարուրով փաթթեց եւ զանիկա մտուրին մէջ պառկեցուց: Ղուկ. Բ. 7:

ՀՈՎԻԻՆԵՐՈՒՆ ՏՐՈՒԱԾ ԱԻԵՏԻՍԸ

(Ղուկ. Բ. 8—14)



Գիշեր ատեն, Բեթլեհեմի դաշտին մէջ մեծ լսյս մը ծագեցաւ եւ Աստուծոյ հրեշտակը հովիւներուն երեսնալով ըսաւ.

— Մի՛ վախնաք, ես ձեզի ուրախութեան աւետիս մը կուտամ: Այսօր Բեթլեհեմի մէջ ձեզի Փրկիչ մը ծնաւ, որ Օծեալ (քաղաւոր) Տէր է:



Նոյն միջոցին բազմաթիւ հրեշտակներ երեսցան, որոնք կ'օրհնէին զԱստուած ու կ'ըսէին, «Փառք ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հանութիւն»:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Վասնզի ձեզի այսօր Փրկիչ մը ծնաւ Դաւիթի քաղաքին մէջ, որ Օծեալ Տէր է: Ղուկ. Բ. 11:

ՅՈՎԻՆԵՐՈՒՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

(Ղուկ. Բ. 15—20)



Հրեշտակներու անբեւութանալէն ետք, հովիւները գիշերով Բեթլեհէմ գացին եւ գտան Յիսուս Մանուկը, որ պառկած էր մսուրին մէջ: Խոնարհեցան Անոր առջեւ ու Աստուծոյ փառք տալով պատմեցին՝ Յովսէփին ու Մարիամին՝ իրենց տրուած աւետիսին մասին:


ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Ու եկան արտօրաւով եւ գտան Մարիամն ու Յովսէփը եւ մսուրին մէջ պառկած Մանուկը:

Ղուկ. Բ. 16:

ՅԻՍՈՒՍԻ ԸՆԺԱՅՈՒՄԸ

(Ղուկ. Բ. 22—35)



Երբ Յիսուս Մանուկը քառասուն օրուան մանուկ մը եղաւ, Յովսէփ եւ Մարիամ գոյգ մը տատրակ առնելով Երուսաղէմի տաճարը տարին զԱյն, Աստուծոյ ընծայելու համար: Տաճարին մէջ կը գտնուէր Սիմէոն անունով ծերունի քահանայ մը, որ արդար ու աստուածավայի մէկն էր: Սիմէոն երբ Յիսուս Մանուկը տեսաւ, զԱյն գիրկը առնելով օրհնեց եւ Աստուծոյ աղօթեց ըսելով.




Արդ՝, ո՛վ Տէր, արձակէ քու ծառայ իսղապուրէամբ՝ քու խօսքիդ համեմատ վասնզի իմ աչքերս տեսան քու փրկութիւնդ:

ԳՈՑ ՍՈՐՎԵԼ

Արդ՝ ո՛վ Տէր, արձակէ քու ծառայ իսղապուրէամբ՝ քու խօսքիդ համեմատ: Վասնզի իմ աչքերս տեսան քու փրկութիւնդ: Ղուկ. Բ. 29—30:

ՄՈԳԵՐՈՒՆ ԳԱԼՈՒՍՏԸ

(Մատթ. Բ. 1—12)





Հեռու երկիրներէ երեւ մագեր Բեթ-լեհեմ եկան Յիսուս Մանուկը փնտռելու: Անոնք Արեւելի մէջ Անոր աստղը տեսնելով, հասկցած էին թէ նոր թագաւոր մը ծնած էր աշխարհի Փրկիչ ըլլալու համար: Երեւ մագերը աստղին առաջնորդութեամբ գտան Յիսուս Մանուկը իր մօրը Մարիամին հետ, եւ երկրպագեցին նորածին Թագաւորին: Մագերը Յիսուս Մանուկին ընծայ բերին՝ ոսկի, կնդրուկ եւ գնուս:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Եւ տունը մտնելով՝ տեսան Մանուկը իր մօրը Մարիամին հետ, ու խոնարհելով երկրպագութիւն ըրին Անոր: Մատթ. Բ. 11:

ՓԱԽՈՒՍ ԴԵՊԻ ԵԳԻՊՏՈՍ

(Մատթ. Բ. 13—15)





Հերովդէս քագաւոր Յիսուս Մանուկին ծնունդը լսելով խռովեցաւ, եւ ուզեց զԱյն սպաննել: Հայր Յովսէփ երագին մէջ Աստուծոյ հրեշտակէն հրաման առնելով գիշերանց Եգիպտոս փախցուց Յիսուս Մանուկն ու Մարիամ Աստուածածինը:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Ան ալ ելաւ, առաւ Մանուկն ու անոր մայրը գիշեր ատեն, եւ գնաց Եգիպտոս: Մատթ. Բ. 14:

ՀՈՎԻՆԵՐՈՒՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

(Ղուկ. Բ. 15—20)





Հրեշտակներու անբերուօքանալէն ետք, հովիւները Բեթլեհէմ գացին ու գտան Մարիամը, Յովսէփը եւ մտուրին մէջ պառկած Յիսուս Մանուկը: Հովիւները խոնարհեցան Յիսուս Մանուկին առջեւ եւ պատմեցին իրենց տեսած բաները:

ԳՈՅ ՍՈՐՎԻԼ ԵՒ ԵՐԳԵԼ

*Սորհուրդ մեծ եւ սքանչելի
Որ յայտ աւուր յայտնեցաւ .
Հովիւքն երգեն ընդ հրեշտակս,
Տան աւետիս աշխարհի:*

ՊԱՏԱՆԻ ՅԻՍՈՒՍ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ

(Ղուկ. Բ. 41—50)



Երբ Յիսուս տասներկու տարեկան եղաւ, իր ծնողքին հետ Երուսաղէմ գնաց: Վերադարձին Յովսէփ եւ Մարիամ յանկարծ նկատեցին որ Յիսուս ուխտաւորներու խումբին մէջ չի գտնուիր: Անմիջապէս Երուսաղէմ վերադարձան եւ երեք օրուայ փնտրտուիէ ետք, զԱյն գտան Աստուծոյ տաճարին մէջ, ուր վարդապետներուն խօսքերը մտիկ կ'ընէր եւ անոնց հարցումներ կ'ուզէր, ու բոլոր լսողները կը գարմանային Անոր խելացի խօսքերուն վրայ: Մարիամ ըսաւ Յիսուսի.

— Որդեակ, ինչո՞ւ այսպէս բիր, ահա հայրդ ու ես տառապած եմք կը փնտրէինք: Յիսուս պատասխանեց.



— Ինչո՞ւ զիս կը փնտրէիք. չէի՞ք գիտեր որ ես իմ Հօրս տունը պէտք էր ըլլայի:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Չէի՞ք զիսեր թէ ինծի պէտք է որ իմ Հօրս տունը ըլլամ: Ղուկ. Բ. 49:

ՅԻՍՈՒՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

(Մատթ. Գ. 13—17)



Յիսուս երեսուն տարեկանին գնաց Յովհաննէս Մկրտիչին եով եւ անկէ մկրտուեցաւ Յորդանան գետին մէջ: Յիսուս մկրտուելէ ետք երբ ջուրէն դուրս ելաւ, երկինքը բացուեցաւ եւ Սուրբ Հոգին ազաւնիի կերպարանով իր վրայ իջաւ: Նոյն միջոցին Հայր Աստուած երկինքէն ըսաւ.



— Ատիկա է իմ սիրելի Որդիս, որուն հաւնեք եմ:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Ատիկա է իմ սիրելի Որդիս, որուն հաւնեք եմ: Մատթ. Գ. 17:

ՅԻՍՈՒՍԻ ՔԱՌԱՄՆՆՈՐԵԱՅ ԹՈՄԱՊԱՅՈՒԹԻՒՆԸ

(Մատթ. Դ. 1—11)



Յիսուս մկրտուելէ ետք անապատը գնաց, եւ քառասուն ցերեկ ու գիշեր ծոմ պահեց ու իր ժամանակը աղօթելով անցուց: Սատանան Յիսուսի անօթեցած ըլլալը գիտնալով, մօտեցաւ եւ ուզեց զԱյն փորձութեան մատնել: Սակայն Յիսուս յաղթեց անոր եւ ըսաւ.



— Ետիս գնա, սատանայ:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Ետիս գնա, սատանայ: Մատթ. Դ. 10:

ԱՍՏՈՒԹՈՅ ԳԱՌՆՈՒԿԸ

(Յովհ. Ա. 29—39)



Օր մը Յովհաննէս Մկրտիչ հեռուէն տեսաւ Յիսուսը որ իրեն կուգար, եւ ըսաւ իր
բովը կեցողներուն.

— Ահա Աստուծոյ Գառնուկը որ աշխարհի մեղքը կը վերցնէ:

Յաջորդ օր Յովհաննէս դարձեալ Յիսուսը տեսնելով նոյն խօսքը կրկնեց: Յով-
հաննէսի երկու աշակերտները երբ այս խօսքը լսեցին, Յիսուսի ետեւէն գացին եւ Անոր ա-
շակերտեցան:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Ահա Աստուծոյ Գառնուկը որ աշխարհի մեղքը կը վերցնէ: Յովհ. Ա. 29:

ՅԻՍՈՒՍԻ ԱՌԱՋԻՆ ԳՐԱՇՔԸ

(Յովհ. Բ. 1—11)



Օր մը Յիսուս եւ իր աշակերտները Կանայի մէջ, հարսանիքի մը հրաւիրուած էին: Երբ գինին պակսեցաւ, մայրը ըսաւ Յիսուսի.

— Գինի չունին:


Յիսուս սպասաւորներուն ըսաւ որ հոն գտնուող ֆարէ վեց կարասները չուրով լեցնեն: Ու երբ կարասները լեցուեցան, Յիսուս անոնց չուրը գինիի փոխակերպեց եւ պատուիրեց բաժնել հարսնետորներուն:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Յիսուս հրաշքներուն սկիզբը զայս ըրաւ Գալիլիոյ Կանա քաղաքին մէջ: Յովհ. Բ. 11:

ՅԻՍՈՒՍ ԿԸ ՄԱՔՐԷ ՏԱՃԱՐԸ

(Յովհ. Բ. 13—17)



Զատկի տօնին երբ Յիսուս երուսաղէմի տաճարը գնաց, տեսաւ թէ մարդիկ Աստուծոյ տունը շուկայի վերածած են եւ հոն ոչխար, ազանի ու արջառ կը ծախեն, իսկ ոմանք ալ լումայափոխութիւն կ'ընեն: Յիսուս չուանէ խարազան մը շինեց եւ առուտուրով զբաղող մարդիկը տաճարէն դուրս վռնտելով ըսաւ.



— Իմ Հօրս տունը առուտուրի տուն մի ընէք:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Իմ Հօրս տունը առուտուրի տուն մի ընէք: Յովհ. Բ. 16:

ՆԻԿՈՂԵՄՈՍ ՅԻՍՈՒՍԻ ՄՕՏ

(Յովհ. Գ. 1—16)



Նիկողեմոս անունով հրեայ իշխան մը Յիսուսի բով զնաց խօսելու եւ զԱյն լսելու համար: Յիսուս ըսաւ Նիկողեմոսի.

— Ճշմարիտ, հշմարիտ կ'ըսեմ քեզի. եթէ մէկը վերստին չծնի՝ չի կրնար մտնել Աստուծոյ արքայութիւնը:

Նիկողեմոս շտապեցաւ Յիսուսին ըսածը եւ հարցուց.

— Ինչպէ՞ս կրնայ մարդ վերստին ծնիլ.

Յիսուս դարձեալ ըսաւ.

— Եթէ մէկը ջուրէն եւ Հոգիէն չծնի՝ չի կրնար մտնել Աստուծոյ արքայութիւնը: Յիսուս իր այս խօսքովը ըսել կ'ուզէր, թէ երկնքի արքայութիւնը մտնելու համար անէն մարդ պէտք է մկրտուի:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Եթէ մէկը ջուրէն եւ Հոգիէն չծնի՝ չի կրնար Աստուծոյ արքայութիւնը մտնել:
Յովհ. Գ. 5:

ՅԻՍՈՒՍ ԵՒ ՍԱՄԱՐԱՅԻ ԿԻՆԸ

(Յովհ. Դ. 4—42)




Յիսուս Սամարիոյ մէջէն անցնելու ատեն ջրհորի մը ֆով նստաւ. իսկ աշակերտները ֆաղաֆ գացին ուտելիք բերելու: Քիչ ետք Սամարացի կին մը եկաւ ջուր ֆաշելու: Յիսուս ջուր ուզեց անկէ: Կինը զարմացաւ թէ Յիսուս ինչպէ՞ս ջուր կ'ուզէր իրմէ, ֆանի որ հրեաները կ'ատէին Սամարացիները: Յիսուս գիտէր թէ այս կինը շատ մեղքեր գործած էր. ուտի զայն դարձի բերելու համար թուեց անոր յանցանքները ու խօսեցաւ Աստուծոյ արֆայութեան մասին եւ յայտնեց թէ ինք Աստուծոյ Որդին՝ Քրիստոսն է: Կինը այս բաները լսելով զգացուեցաւ եւ ջուրին սափորը հոն ձգելով ֆաղաֆ գնաց եւ լուր տուաւ մարդոց որ զան Յիսուսը տեսնեն ու Անոր խօսքերը լսեն: Մարդիկ ֆաղաֆէն ելլելով Յիսուսի ֆով եկան եւ Անոր խօսքերը լսելով հաւատացին:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Տէր, ըսաւ կինը, կը տեսնեմ որ դուն մարդարէ ես: Յովհ. Դ. 19:

ԱԶՆՈՒԱԿԱՆԻ ՈՐԴԻՈՅՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

(Յովհ. Դ. 46—54)



Ազնուականի մը որդին ծանրապէս հիւանդացաւ: Ազնուականը հեռու տեղէ գնաց Գալիլիա՝ Յիսուսի մօտ եւ ազաչեց Անոր որ իրեն հետ երթայ եւ բժշկէ իր մահամեծր որդին: Յիսուս ըսաւ անոր.

— Գնա, գաւակդ ողջ է.



Մարդը հաւատաց Յիսուսի խօսքին եւ դէպի իր տունը դարձաւ: Մինչ կը վերադառնար, իր ծառաները գինձ դիմաւորելով աւետեցին թէ որդին առողջացած է: Ազնուականը իր ծառաներուն հարցնելով ստուգեց, որ Յիսուսի կողմէ «գաւակդ ողջ է» ըսուած վայրկեանի՛ն իր գաւակը առողջացած էր:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Գնա, քու որդիդ ողջ է: Յովհ. Դ. 50:

ՅԻՍՈՒՍ ԿԸ ԿԱՆՁԷ ԻՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

(Մատթ. Դ. 18—22)



Յիսուս Գալիլիոյ ծովուն եզերքը պտըտելու ատեն տեսաւ Սիմոն-Պետրոսն ու անոր եղբայրը՝ Անդրէասը, որոնք ծովը ուռկան կը նետէին:

— Իմ ետեւէս եկէ՛ք ու ձեզ մարդու սրտորդ պիտի ընեմ, ըսաւ Յիսուս անոնց:

Անոնք հնազանդեցան Յիսուսի եւ Անոր ետեւէն գացին:



Քիչ մը առաջ երթալով Յիսուս տեսաւ Յակոբոսն ու Յովհաննէսը, որոնք իրենց հօրը հետ ուռկան կը նորոգէին: Յիսուս գանոնք ալ կանչեց: Անոնք ալ շուտով նստակն ու իրենց հայրը թողուցին եւ Յիսուսի ետեւէն գացին:

ԳՈՑ ՍՈՐՎԻՒ

Իմ ետեւէս եկէ՛ք ու ձեզ մարդու սրտորդ պիտի ընեմ: Մատթ. Դ. 19:

ԲՈՐՈՏ ՍԱՐԴՈՒՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

(Մարկ. Ա. 40—45)



Բորոտ մարդ մը Յիսուսի ֆով գալով ազաչեց եւ ըսաւ .

— Տէր, եթէ ուզես, կրնաս զիս մաքրել :

Յիսուս գքաց եւ իր ձեռքը երկարելով դպաւ անոր ու ըսաւ .

— Կ'ուզեմ, մաքրուէ' :


Իսկոյն մարդուն բորոտութիւնը մաքրուեցաւ :

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Տէր, եթէ ուզես, կրնաս զիս մաքրել : Մարկ. Ա. 40 :

ԿԱՓԱՌՆԱՅՈՒՄԻ ԱՆԴԱՄԱԼՈՅԹԻՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

(Մարկ. Բ. 1—12)



Յիսուս տան մը մէջ փարոզելու ատեն չորս մարդիկ անդամալոյծ մը բերին: Սակայն բազմութիւն ըլլալուն համար չկրցան զայն դռնէն ներս մտցնել: Ուստի տունին տանիքը քակելով առաստաղը բացին եւ անդամալոյծը իր անկողինովը վար իջեցուցին՝ հիշդ Յիսուսի առջեւ: Յիսուս անոնց հաւատքը տեսնելով ըսաւ անդամալոյծին.

— Որդեակ, բու մեղքերդ ներուած են:

Կարգ մը մարդիկ զարմացան Յիսուսի այս խօսքին վրայ. սակայն Յիսուս անոնց բացատրեց, թէ ինք իշխանութիւն ունի մարդոց մեղքերը ներելու: Ապա ըսաւ անդամալոյծին.

— Ելի՛ր մահինդ առ ու տունդ գնա:


Իսկոյն անդամալոյծը բժշկուելով ոտքի ելաւ, եւ իր անկողինը առնելով գնաց:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Որդեակ չու մեղքերդ ներուած են: Մատթ. Բ. 5:

ՄԱՏԹԵՈՍԻ ԿՈՉՈՒՄԸ

(Մատթ. Թ. 9—13)



Յիսուս Կափառնայումի մաքսատան առջեւէն անցնելու ատեն տեսաւ Մատթէոս անունով մարդ մը որ հոն նստած էր:

— Ետեւէս եկուր, ըսաւ Յիսուս անոր:




Ան ալ ելլելով Յիսուսի ետեւէն գնաց եւ դարձաւ անոր աշակերտը:

ԳՈՅ ՍՈՐՎԻԼ

Ու ըսաւ անոր, «Ետեւէս եկուր»: Մատթ. Թ. 9:

ԲԵԹՅԵԶԴԱՅԻ ԱՆԴԱՄԱԼՈՅԹԻՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

(Յովհ. Ե. 1—14)



Երուսաղէմի մէջ, Բեթ-հեզդայի աւագանին շուրջ հաւաքուած կ'ըլլար բազմութիւն մը հիւանդներու, կաղերու, կոյրերու եւ գօսացեալներու: Անոնք կ'ըսպասէին աւագանի ջուրին յուզուելուն, քանի որ Տիրոջ հրեշտակը երբեմն երբեմն աւագան կ'իջնէր ու ջուրը կը շարժէր. եւ ով որ այդ պահուն առաջին անգամ ջուրը իջնէր, կը բժշկուէր:

Յիսուս երբ Բեթ-հեզդայի աւագանը այցելեց, հոն տեսաւ անդամալոյծ մը որ 38 տարիներէ ի վեր հիւանդ պառկած էր:


- Կ'ուզե՞ս առողջանալ, հարցուց Յիսուս անոր:
- Տէր, մէկը չունիմ որ զիս աւագանը նետէ՝ երբ ջուրը շարժի. ըսաւ անդամալոյծը:
- Ելի՛ր, մահիճդ առ ու քալէ, ըսաւ Յիսուս:
- Իսկոյն անդամալոյծը ոտքի ելաւ ու մահիճը առնելով գնաց:

ԳՈՅ ՍՈՐՎԻԼ

Ելի՛ր, մահիճդ առ ու քալէ: Յովհ. Ե. 8:

ԱՍՏՈՒԹՈՅ ԶՈԳԱԾՈՒԹԻՒՆԸ

(Մատթ. 2. 25—34)






Յիսուս իր քարոզութեան ատեն պատուիրեց որ մարդիկ շնտատանջուին թէ ինչ պիտի ուտեն եւ կամ ինչ պիտի հագնին, քանի որ Աստուած կը հոգայ իր բոլոր արարածները եւ կը խնամէ զանոնք: Յիսուս ցոյց տուաւ երկնքի թռչունները, որոնք կը կերակրուին Աստուծոյ կողմէ: Յոյց տուաւ նաեւ դաշտի շուշանները, որոնք կ'աճին Աստուծոյ գորութեամբ:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Հոգ մի բնէք՝ ըսելով թէ ի՞նչ պիտի ուտենք կամ ի՞նչ պիտի հագնինք: Մատթ. 2. 31:

ՀԱՐԻԻՐԱՊԵՏԻ ԺԱՌԱՅԻՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

(Ղուկ. Է. 1—10)



Հոովմայեցի հարիւրապետի մը ծառան սաստիկ հիւանդացաւ: Հարիւրապետը ուզեց Յիսուսի քով երթալ եւ իր ծառային համար բժշկութիւն խնդրել. սակայն չհամարձակեցաւ անձամբ ներկայանալ: Ուստի հրեաներէն մի քանի ծերեր զրկեց եւ անոնց միջոցաւ ազաչեց Յիսուսի որ միայն խօսք մը ըսէ եւ բժշկէ իր ծառան:

Յիսուս նամբայ ելաւ հարիւրապետին տունը երթալու համար. ու երբ մօտեցած էր, հարիւրապետը զինք դիմաւորելով ըսաւ.

— Տէր, մի յոգնիր, վասնզի ես արժանի չեմ Քեզ իմ տունս ընդունելու: Դուն միայն խօսք մը ըսէ ու ծառաս պիտի բժշկուի:

Յիսուս ըսաւ հարիւրապետին.

— Գնա՛, ինչպէս որ հաւատացիր, այնպէս թող ըլլայ:



Նոյն ժամուն հարիւրապետի ծառան բժշկուեցաւ:

ԳՈՑ ՍՈՐՎԻՒ

— Գնա՛, ինչպէս որ հաւատացիր, այնպէս թող ըլլայ: Մատթ. Ը. 13:

ՆԱՅԻՆԻ ՊԱՏԱՆԻՒՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

(Ղուկ. Է. 11—17)



Յիսուս Նային քաղաքը մտնելու ատեն հանդիպեցաւ յուզարկաւորներու, որոնք որբեւայրի կնոջ մը մէկ հատիկ որդւոյն դագաղը կը տանէին: Յիսուս որբեւայրի կնոջ անմխիթար վիճակը տեսնելով գթաց անոր վրայ եւ մտնելով ըսաւ.

— Մի՛ լար:

Ապա դագաղին դպաւ եւ ըսաւ մեռեալին.

— Ով պատանի, բեզի կ'ըսեմ: Ելի՛ր:

Մեռեալը իսկոյն ելաւ եւ սկսաւ խօսիլ: Մարդիկ այս հրաշքը տեսնելով զԱստուած փառաւորեցին:

ԳՈՅ ՍՈՐՎԻԼ

Ով պատանի, բեզի կ'ըսեմ, ելի՛ր: Ղուկ. Է. 14:

ՅԻՍՈՒՍ ԺՈՎՐ ԿՐ ԽԱՂԱՂԵՑՆԷ

(Մատթ. Ը. 23—27)



Յիսուս եւ իր աշակերտները նաւակ մտնելով սկսան նամբորդել: Յիսուս յոգնած ըլլալով նաւակին ետեւի կողմը քնացաւ: Քիչ ետք փոթորիկ մը ելաւ եւ ծովը սկսաւ ալեկոծիլ, այնպէս որ նաւակը ջուրով կը ծածկուէր: Աշակերտները շատ վախցան եւ Յիսուսը արթնցնելով ըսին.

— Տէր, ազատէ մեզ. ահա կը կորսուինք:



Յիսուս ելլելով սաստեց հովն ու ծովը եւ խաղազութիւն եղաւ:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Տէր, ազատէ մեզ, ահա կը կորսուինք: Մատթ. Ը. 25:

ՅԱՅՐՈՍԻ ԱՂԶԿԱՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

(Մարկ. Ե. 21—24, 35—43)



Յայրոս անունով մարդու մը տասներկու տարեկան աղջիկը հիւանդացաւ, եւ մեռ-
նելու մօտ էր: Հայրը վազեց Յիսուսի մօտ եւ խնդրեց որ իր տունը գայ եւ բժշկէ աղջիկը:
Մինչ Յիսուս համբայ կ'ելլէր, մարդիկ եկան եւ Յայրոսին ըսին.

— Աղջիկդ մեռաւ, ալ վարդապետը մի յոգնեցնէր:

Սակայն Յիսուս ըսաւ Յայրոսին.

— Մի՛ վախճար, միայն թէ հաւատա՛:

Յիսուս Յայրոսին տունը երթալով դուրս հանել տուաւ լացող բազմութիւնը, եւ
ներս մտնելով մեռած աղջկան ձեռքէն բռնեց եւ ըսաւ.

— Աղջի՛կ, քեզի կ'ըսեմ, ելի՛ր:




Աղջիկը իսկոյն ոտքի ելաւ ու սկսաւ խօսիլ: Հայրն ու մայրը շատ ուրախացան եւ
Աստուծոյ փառք տուին այս հրաշքին համար:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Մի՛ վախճար, միայն թէ հաւատա՛: Մարկ. Ե. 36:

ՅԻՆԳ ՅԱԶԱՐԻՆ ԿԵՐԱԿՐՈՒԻԼԸ

(Մարկ. 2. 35—44)



Հագարաւոր մարդիկ հաւաքուած էին Յիսուսի իմը եւ մտիկ կ'ընէին անոր խօս-
քերը: Երբ օրը իրիկուն եղաւ, աշակերտները Յիսուսի մօտեմալով ըսին.

— Հոս անապատ տեղ մըն է եւ ժամանակն ալ ուշացած. արձակէ այս ժողովուր-
դը, որպէսզի ամէն մարդ մօտակայ գիւղերէն կերակուր գնէ եւ ուտէ:


Յիսուս իր աշակերտներուն հարցուց թէ ուտելու համար ի՞նչ ունէին իրենց մօտ:
Անոնք ալ Յիսուսի առջեւ բերին հինգ անանակ եւ երկու ձուկ: Յիսուս զանոնք առնելով
օրհնեց: Աշակերտները օրհնուած հացերն ու ձուկերը բաժնեցին ժողովուրդին: Կիներէն ու
մանուկներէն զատ հինգ հազարի չափ այր մարդիկ հաշակեցին ու կշտացան Յիսուսի օրհնած
հացերէն եւ ձուկերէն:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Եւ ամէնը կերան ու կշտացան: Եւ տասներկու կողով լեցուն կտորուանքները
վերցուցին: Մարկ. 2. 42-43:

ԱՅՐԻ ԿՆՈՋ ԼՈՒՄԱՆ

(Մարկ. ԺԲ. 41—44)



Յիսուս տանարին մէջ գանձանակին դիմաց նստած կը դիտէր անոր մէջ դրամ ձգողները: Տեսաւ հարուստներ, որոնք շատ դրամ կը ձգէին: Քիչ ետք տեսաւ ազգատ որբեւայրի կին մը որ միայն երկու լումայ ձգեց: Յիսուս ըսաւ իր աշակերտներուն.

— Այս ազգատ որբեւայրին գանձանակին մէջ ամենէն աւելի դրամ ձգողը եղաւ, քանի որ ամենքը իրենց աւելցածէն տուին. բայց այս կինը իր բոլոր ունեցածը տուաւ:

ԳՈՅ ՍՈՐՎԻԼ

Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որ այս ազգատ որբեւայրին ամենէն աւելի ձգեց: Ղուկ. ԻԱ. 3:

ԿՈՐՍՈՒԱԾ ՈՉԽԱՐԸ

(Ղուկ. ԺԵ. 3—7)



Քարի հովիւ մը հաքիւր ոչխար ունէր: Իրիկուն մը երբ գանոնք փարախ կը մըտ-
ցընէր, տեսաւ թէ անոնցմէ մէկը պակաս է: Հովիւը իննսուն եւ ինը ոչխարները հոն ձգելով
կորսուած ոչխարին հետեւէն գնաց: Մեծ յոգնութենէ եւ չարչարանքէ ետք ի վերջոյ գտաւ
գայն եւ ուրախութեամբ բերաւ ու իր բարեկամները կանչելով ըսաւ.

— Ուրախ եղէք ինձի հետ, որովհետեւ իմ կորսուած ոչխարս գտայ:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Ուրախ եղէք ինձի հետ, որովհետեւ իմ կորսուած ոչխարս գտայ: Ղուկ. ԺԵ. 6:

ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻՒՆ ԴԱՐՁՐ

(Դուկ. ԺԵ. 11—32)



Մարդ մը երկու որդի ունէր: Օր մը կրտսեր տղան հեռացաւ իր հօրը տունէն եւ օտար երկիր գնաց: Հոն անառակ կեանք մը ապրելով վատնեց իր ունեցած հարստութիւնը եւ չփառութեան մէջ ինկաւ, այնպէս որ շատ օրեր անօթի մնաց եւ ստիպուեցաւ խոզեր արածել կտոր մը հաց հարելու համար: Սակայն օր մը, անդրադառնալով իր ըրած սխալին՝ զղջաց ու վերադարձաւ հօրը բով եւ ներողութիւն խնդրելով ըսաւ.

— Հայր, մեղայ յերկինս եւ առաջի քո:

Հայրը գթաց իր անառակ որդւոյն վրայ. համբուրեց գայն եւ ներս ընդունեց: Պատուիրեց իր ծառաներուն որ անոր պատմութեան հազցնեն, մատր մատանի անցընեն եւ ոտքերուն ալ կօշիկ: Եւ նոյն ատեն ըսաւ.




— Մօրթեցէք պարարտ եզր, ուտենք եւ ուրախ ըլլանք, որովհետեւ այս իմ որդիս մեռած էր եւ ողջնցաւ, կարտւած էր ու գտնուեցաւ:

ԳՈՅ ՍՈՐՎԻԼ

Հայր, մեղայ յերկինս եւ առաջի քո: Դուկ. ԺԵ. 21:

ԱՍՏՈՒԹՈՅ ԽՆԱՄՔԸ ԻՐ ԶԱԻԱԿՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

(Ղուկ. ԺԲ. 6—7)



Յիսուս մեզի կը պատուիրէ Աստուծոյ վստահիլ, քանի որ Ան մեզ կը խնամէ ու կը պահպանէ: Յիսուս թռչունները օրինակ բերելով կ'ըսէ.



— Զէ՞ որ հինգ թռչուն երկու դանկի կը ծախուի եւ անոնցմէ մէկը մոռցուած չէ Աստուծոյ առջեւ: Բայց ձեր գլխուն բոլոր մագերն ալ համբուած են. ուրեմն մի վախնաք, վասնզի դուք ճանաչուկներէ աւելի յարգի էք:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Վասնզի դուք շատ ճանաչուկներէ աւելի յարգի էք: Ղուկ. ԺԲ. 7:

ՅԻՍՈՒՍ ԵՒ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ

(Մարկ. ժ. 13—16)



Մանուկները մկրտուելէ ետք կը դառնան Աստուծոյ որդեգիրներ: Ուստի բոլոր քրիստոնեայ մանուկներն ու պատանիները պարտաւոր են Յիսուսի ֆոյ կրթալ, անոր օրհնութիւնը առնել ու բարի ըլլալ: Յիսուս կոչ կ'ընէ բոլորին եւ կ'ըսէ, «Թող տուէք այդ մանր տղոց որ ինծի գան»:

Այն մանուկներն ու պատանիները որոնք եկեղեցի ու կիրակնօրեայ դպրոց կը յաճախեն, Յիսուսի ֆոյ գացած կ'ըլլան եւ կ'ըստանան Անոր օրհնութիւնը:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Թող տուէք այդ մանր տղոց որ ինծի գան: Մարկ. ժ. 14: